Հավելված
ՀՀ կառավարության 2026 թվականի
ապրիլի 18 -ի N 523 - Ա որոշման

«ՔՈԱՖ ՍՄԱՐԹ» ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԵԼՈՒ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ՝ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գույք նվիրաբերողը	Արմավիրի մարզի Արմավիր համայնք
Սեփականության իրավունք ձեռք բերողը (նվիրառու)	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ
Նվիրաբերության պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումը կայացնելուց հետո վեցամսյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման և գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում են	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցներով
Կողմերի պարտավորությունները	1. Նվիրաբերողը պարտավորվում է՝ 1) նվիրառուին տրամադրել երրորդ անձանց իրավունքներից, փաստացի տիրապետումից ազատ հողամաս: 2. Նվիրառուն պարտավոր է՝ 1) հողամասն օգտագործել ՀՀ փոխվարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 875-Ա որոշմամբ բարեգործական որակված ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսված բոլոր միջոցառումների իրականացման նպատակով. 2) ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումներն իրականացնել ծրագրի բյուջեի 6,638,143,000 դրամի չափով՝ մինչև 2028 թվականի դեկտեմբերի 30-ը. 3) բացառել իր կողմից նվիրաբերման կարգով ձեռք բերված հողամասի օտարումը, գրավադրումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը:

Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18.04.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ